ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

ԱՌԱՐԿԱ Կերպարվեստ

ՂԵԿԱՎԱՐ Կիմա Օհանեյան, առաջին խումբ

ՀԵՂԻՆԱԿ Նազելի Նահապետյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ 4

ԳԼՈՒԽ 2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ 8

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

Հավելված

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգի գործունեության արդյունավետությունը որոշելու հիմնական ցուցանիշը դրա որակն է: Կրթության որակը ուղղակիորեն կախված է ուսուցիչների պրոֆեսիոնալիզմի, նրանց մասնագիտական աճի և զարգացման կազմակերպման արդյունավետությունից:

Ուսուցչի մանկավարժական գործունեությունը՝ որպես բարձր որակավորմամբ մասնագետի մասնագիտական աշխատանք, բնութագրվում է սովորողների անձի դաստիարակության, ուսուցման, զարգացման և ինքնազարգացման համար մանկավարժական գործընթացում անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ: Ժամանակակից հասարակության պահանջները, աշխատանքի նոր շուկան որոշում են ուսուցչի՝ որպես անձնավորության, մանկավարժական գործունեության դինամիկ փոփոխությունների հետազոտության անհրաժեշտությունը, որը կողմնորոշվում է կենսական և մասնագիտական ակտիվությամբ, որն օգնում է ուսուցչի պահանջներն ու նպատակները համատեղել աշակերտների հնարավորությունների, ցանկությունների և նպատակների հետ:

Ուսուցչի պրոֆեսիոնալիզմի զարգացման ուղղություններից մեկն ինքնակրթությունն է: Թեմայի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել մի շարք արտասահմանյան գրողների և մասնագետների ուսումնասիրությունները, մասնավորապես Վ.Ա. Սուխոմլինսկին ինքնակրթությունը գերադասում էր մեթոդական աշխատանքի այլ ձևերից: Նա գրել է. «Ինքնակրթությամբ ստացված գիտելիքը շատ ամուր է պահվում հիշողության մեջ… Ինքնակրթության ընթացքում ձևավորվում են անհատական գծեր, մշակվում է մտավոր աշխատանքի անհատական ոճ»:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ստեղծագործական և հետազոտական աշխատանքների դերը ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման մեջ:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՆՔ

Ուսուցիչը կարող է ունենալ հարուստ գիտելիքներ, լայն մտահորիզոն, բազմակողմանի զարգացածություն, բայց չկարողանալ լուծել սովորողների կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները: Բնականաբար, ուսուցիչ լինելու համար առաջնային են նրա անձնային և մասնագիտական որակները, գաղափարական, իմացական և արժեքային ուղղվածությունը, նրա մասնագիտական հիմնարար գիտելիքներն ու հմտությունները:

Մանկավարժի մասնագիտությունը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով էլ այն տարբերվում է մյուս մասնագիտություններից, քանի որ նրա գործունեության նպատակը անձի մտավոր, հոգևոր, բարոյական, ֆիզիկական, գեղագիտական, իրավական, էկոլոգիական զարգացման գործընթացի կառավարումն է: Այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ են ոչ միայն մասնագիտական, առարկայական այլև մարդաբանական, կառավարչական, հոգեբանական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Մանկավարժական մասնագիտության յուրահատկությունը նրա մարդասիրական, ստեղծագործական, կոլեկտիվ-գործընկերային բնույթի մեջ է:

Ուսուցչը կատարում է մի շարք կարևորագույն գործառույթներ, դրանից են՝

- աշակերտական ինքնակառավարման աջակցումը,
- հայտորոշման գործառույթը,
- ծրագրման գործառույթը,
- գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման գործառույթը,
- սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելը՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ:

Կրթության ոլորտում անընդհատ կատարվող բարեփոխումները ենթադրում են ուսուցիչների որակի հետագա բարելավում, ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով: Հիմնական նպատակն է՝ բարձրացնել հանրակրթության որակը ուսուցիչների մասնագիտական գիտելիքների ու մանկավարժական հմտությունների շարունակական զարգացման միջոցով և մանկավարժի մասնագիտության վարկանիշը՝ աշխատանքի պայմանների բարելավման միջոցով:

Ուսուցչի պրոֆեսիոնալիզմի մակարդակի նկատմամբ ներկայիս պահանջները ենթադրում են դպրոցում ուսուցչի գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական և գիտամեթոդական կառուցվածքի որակական փոփոխություն, ինքնակրթության և ինքնազարգացման նախագծում և դրա իրացման պայմանների ապահովում: Այս համատեքստում ուսուցչի մասնագիտական կատարելագործումը չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում: Այժմ ուսուցիչների մանկավարժական մասնագիտական գործ ունեության կատարելագործման հարցի վերաբերյալ կան մի շարք տեսական մոտեցումներ, որոնք հիմք են ծառայում նրանց կողմից դասավանդման արվեստի գիտական հիմունքների յուրացման և մասնագիտական կայացման համար (Գ.Ա. Բորոդովսկի, Վ.Ա. Սլաստենին, Ի.Ֆ.Իսաև, Վ.Ի. Սլոբոդչիկով, Ն.Ա. Շայդենկո և այլք): Այս տեսանկյունից առաջնային է դառնում նաև մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական այնպիսի հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ուսուցիչների մասնագիտական կայացմանը, մանկավարժական վարպետության ձևավորմանը, նրանց կողմից դասավանդման հիմունքների, ուսուցման սկզբունքների և օրինաչափությունների յուրացմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսման որակը:

Նշենք, որ ուսոցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների բարձրացման ուղիներից մեկն էլ վերապատրաստումներն են, որին մասնակցելը հետապնդում է հետևյալ նպատակները.

1. ուսուցչի համար գիտելիքների նորացման, թարմացման, ուսուցման մշտական պրոցեսի մեջ գտնվելու, կատարելագործման կարևորումը,

2. ինքնահաստատվելու, ուժերը չափելու, որպես ուսուցիչ սեփական մակարդակը պատկերացնելու մտադրությունը,
3. ատեստավորվելու ցանկությունը, որոշ դեպքերում՝ տարակարգին դիմելու ցանկությունը,
4. այլ ուսուցիչների հետ փորձի փոխանակումը:

Կարևոր է նաև նշել, որ կրթության ոլորտում կատարված վերջին փոփոխություններով սահմանվել է ուսուցչի մասնագիտական գիտելիքների կատարելագործման հետևյալ մասնագիտական ձևերը՝ ըստ զարգացման ոլորտների, դիտարկվում են առարկայական գիտելիքների զարգացումը, դասընթացների և դասերի պլանավորումը, դասի վարումը, ռեսուրսների կառավարումը, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ինտեգրումը, 21-րդ դարի հմտությունների (քննադատական մտածողություն, ստեղծարարություն, համագործակցություն, հաղորդակցում, տեղեկատվական գրագիտություն, մեդիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն, ճկունություն, առաջնորդում, նախաձեռնողականություն, արդյունավետություն, սոցիալական հմտություններ) խթանումը, սովորողների կարիքների ճանաչումը, ուսումնառության գնահատումը, ներառական մեթոդների կիրառումը, մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնումը, կրթական քաղաքականությունների և պրակտիկայի իմացությունը, մասնագիտական բարեվարքությունը և ժողովրդավարական արժեքները: Յուրաքանչյուր մասնագիտական գործունեության ձևի համար սահմանվել են հստակ և չափելի կարողունակություններ:

Կարևոր է նաև անդրադառանալ կարողություններին: Ի. Պ. Պոդլասին[1] առանձնացնում է մանկավարժական կարողությունների հետևյալ խմբերը՝ կազմակերպչական, դիդակտիկ, զգայական, հաղորդակցական, սուգեստիվ, հետազոտական, գիտական-ճանաչողական, որոնք ապահովում են ուսուցչի գործունեության արդյունավետությունը:

Ռուս մանկավարժ Ն. Վ. Կուզմինան առանձնացնում է ուսուցչի նախագծային, կառուցողական, կազմակերպչական, զգայական, հուզակամային հաղորդակցական, խոսքային, ստեղծագործական, ակադեմիական, դիդակտիկ կարողությունները:

[1] Дзюбенко С. В. Роль и функции исследовательской деятельности в педагогической инновационной практике учителя / С. В. Дзюбенко // Качество. Инновации. Образование. — 2014. — № 3. — С. 49—54.

Սա թույլ է տալիս փաստելու, որ ուսումնադասատիարակչական գործընթացի արդյունավետությունը, սովորողների ուսման որակը, արժեքային կողմնորոշումների ձևավորումը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական և անձնային որակների համալիրի առկայությամբ:

Ժամանակակից մասնագիտական կրթության համակարգը հիմնվում է մանկավարժական նոր՝ սովորողակենտրոն հարացույցի և կոմպետենտային, համակարգային, մարդասիրական մոտեցումների վրա: Կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ընդունակությունների և անձնային որակների դրսևորում: Կոմպետենտությունը ձևավորված կոմպետենցիաների համակարգն է: Իսկ կոմպետենցիան ուսուցչի մասնագիտական գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական փորձառության որոշակի մակարդակն է, որն էլ որոշում է նրա՝ մանկավարժական գործունեությանը պատրաստ լինելը: Այսինքն՝ կոմպետենտությունը բնութագրում է գործունեության սուբյեկտին, իսկ կոմպետենցիաները վերաբերում են գործունեությանը: Մասնագիտական կոմպետենցիաները բաժանվում են երկու խմբի[2].

1. ընդհանրական կամ համամշակութային կոմպետենցիաներ (գործիքային, միջանձնային և համակարգային կամ համագիտական),
2. բուն մասնագիտական (ընդհանուր մասնագիտական և նեղ մասնագիտական)՝ հաշվի առնելով կոնկրետ կրթական ծրագրի և ուսանողների տվյալ խմբի առանձնահատկությունները:

[2] Суходимцева А. П. Обновление методов обучения в аспекте методологии учебной деятельности / А. П. Суходимцева // Преподавание истории и общество-знания в школе. — 2017. — № 6. — С. 39—43.

ԳԼՈՒԽ 2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Մանկավարժագիտության մեջ տակավին ոչ լիարժեք են ուսումնասիրված դպրոցում ուսուցիչների մասնագիտական կատարելագործման մի շարք տեսանկյուններ՝

- ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման գիտամեթոդական, հոգեբանամանկավարժական և տեխնոլոգիական կողմերի ապահովման հիմնախնդիրը,
- ուսուցիչիների ստեղծագործական ներուժի ակտիվացման, ինքնիրացման և ինքնազարգացման համար պայմանների ստեղծման հիմնախնդիրը։

Անշուշտ, նշված հիմնախնդիրների լուծման հաջողությունը պայմանավորված է բուհում ապագա ուսուցիչների պատրաստման և դպրոցում նրանց մասնագիտական կատարելագործման արդյունավետությամբ: Սակայն, մեր կարծիքով, դպրոցի զարգացման կառավարման ապահովման համար հրատապ է դառնում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու ուսուցչի մասնագիտական գործունեության որակը և կատարելագործելու մանկավարժական վարպետությունը։

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ինովացիաների արդի պայմաններում ուսուցիչների մասնագիտական զարգացման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության կատարելագործման յուրահատկությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալ- մշակութային դինամիկ իրավիճակով, ուսուցչի մասնագիտական դիրքորոշմամբ և հասարակության զարգացման մեջ իր դերի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ:

Ուսուցչի մասնագիտական հմտությունները, որոնք կարող են կատարելագործվել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ կատարելու ընթացքում, կարող ենք դասակարգել հետևյալ կերպ՝

1. Տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների, գործունեության ձևերի և դրանց կիրառման պայմանների իմացություն,
2. Համակարգչային տեխնոլոգիաների տիրապետում,

3. գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու ունակություն,
4. Դաստիարակչական և կրթական գործընթաց նախագծելու ունակություն,
5. Իրենց գործունեության արդյունավետությունն ու արդյունքները վերլուծելու ունակություն:

Իսկ մեթոդական հմտությունները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝

- Ուսուցիչների տեսական և հոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակ,
- Կրթական գործունեության մեջ նորարարական կողմնորոշման ձևավորում՝ հիմնվածդասավանդման առաջավոր փորձի ուսումնասիրության, ընդհանրացման և տարածման վրա,
- Նոր կրթական ծրագրերի, կրթական պետական չափորոշիչների ուսումնասիրություն,
- Նոր կարգավորող փաստաթղթերի, ուսուցողական և մեթոդական նյութերի ուսումնասիրություն, ինքնակրթության հարցում ուսուցիչներին աջակցություն:

Հետևաբար, մասնագիտական կարողությունների կատարելագործումը լիովին համընկնում է մեթոդական աշխատանքի առաջադրանքների հետ: Մասնագիտական և առարկայական հմտությունների զարգացման մեջ կարևոր է նաև ուսուցիչների ինքնակրթությունը: Ուսուցիչների ինքնակրթության հիմնական ձևերը կարող են լինել[3].

- ուսուցիչների մասնագիտական իրավասության բարձրացման համակարգում մեթոդական աշխատանքի իրավական և գիտական բազայի ուսումնասիրություն,
- ուսուցիչների լավագույն մանկավարժական փորձի ուսումնասիրություն.
- ինտերակտիվ ուսուցման տեխնոլոգիաների ուսումնասիրություն, մոդելավորում, ներդրում,
- կրթության և դաստիարակության նորարարական տեխնոլոգիաների յուրացում,
- մասնակցություն սեմինարների, գիտագործնական կոնֆերանսների, մանկավարժական ընթերցումների, ստեղծագործական խմբերի հետ աշխատանք,

[3] Коджаспирова Г.М. Культура профессионального самообразования педагога. Пособие / Г.М. Коджаспирова. М.: Издательский центр «Академия», 1994. 334 с.

- մանկավարժական հետազոտությունների իրականացում,
- տպագիր նյութերի պատրաստում,
- իրենց գործունեության արդյունքների ինքնավերլուծության իրականացում և մասնագիտական ինքնակատարելագործման խնդիրների սահմանում:

Ինքնակրթությունը դրական արդյունքների է հասնում, երբ այն նպատակային է, պլանավորված, համակարգված: Դա անելու համար օգտակար է կազմել ինքնակրթության, մասնագիտական զարգացման պլաններ:

Անդրադառնանք ստեղծագործական և հետազոտական աշխատանքներին: Ուսուցչի ստեղծագործական գործունեության նախնական հիմքերը դրվում են բարձրագույն դպրոցում, երբ նա ընտրում է ուսուցչի մասնագիտությունը, ստանում է տեսական խոր և կայուն գիտելիքներ, մանկավարժական պրակտիկայի ընթացքում ձեռք է բերում գործնական կարողություններ և հմտություններ, այստեղ էլ ձևավորվում են նրա մանկավարժական վարպետության նախադրյալները, իսկ հետագա մանկավարժական աշխատանքի ընթացքում, ինչպես նաև ինքնակրթության, ինքնազարգացման և ինքնակատարելագործման ճանապարհով նա հասնում է վարպետության բարձունքներին:

Այսօր ուսուցչի ստեղծագործական աճի հիմնահարցը ձեռք է բերում հատուկ կարևորություն: Մանկավարժի պրոֆեսիոնալ վարպետության կատարելագործումը գլխավոր պայման է ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի հետագա բարձրացման համար և հասցնում է նրան համապատասխան կյանքի պահանջներին: Ամփոփելով կարող ենք ասել, որ ուսուցչի ստեղծագործական գործունեությունն ունի սկիզբ, սակայն չունի վախճան, ավարտ, քանի որ ուսուցչի գործունեությունը շարունակվում է իր սաների մեջ, իր սաների միջոցով և իր սաների համար:

Հետազոտությունը համակարգված հարցադրումների ամբողջություն է, որը (որից ստացված տեղեկատվությունը) հրապարակայնացվում է: Հետազոտությունը կարող է դասակարգվել ամենատարբեր հիմքերով՝

- ըստ այդ հետազոտության շրջանակներում կիրառված մեթոդների,
- ըստ այն գիտելիքի, որը հետազոտությունը նպատակ ունի ստեղծելու/վերհանելու,

- ըստ այն թիրախային խմբի, որին հետազոտությունն ուղղված է,
- ըստ հետազոտության հիմնախնդրի և այլն:

Հետազոտությունների իրականացման ժամանակ կիրառվում են քանակական և որակական մի շարք մեթոդներ, դրանք են.

Հետազոտության մեթոդները	քանակական	Չափում է տարածվածության մակարդակը
		Ուսումնասիրում է գործողությունները
		Օբյեկտիվ է
		Ապահովում է ապացույցներ.
		Նկարագրողական է
		Նկարագրում է
	որակական	Ապահովում է հասկացման խորությունը
		Ուսումնասիրում է դրդապատճառները
		Սուբյեկտիվ է
		Կարող է բացահայտել
		Հետազոտական է
		Մեկնաբանում է

Թե՛ քանակական, թե՛ որակական հետազոտություններ իրականացնելիս պետք է հիշել, որ տեղեկատվությունը, որը մենք ստանում ենք մեծապես պայմանավորված է այն հարցերով, որոնք մենք տալիս ենք, կամ ընդգրկում ենք հարցաթերթիկում: Որակական հետազոտության մեթոդներ կարելի է ընտրել խորացված հարցազրույցը և ֆոկուսխմբային քննարկումների մեթոդները: Քանակական հետազոտություն կարելի է իրականացնել ստանդարտացված հարցազրույցի մեթոդով:

Հավելենք, որ հետազոտական աշխատանքների իրականացումից կան մի շարք ակնկալիքներ, օրինակ.

- Հետազոտական աշխատանքի արդյունավետության բարձրացում,
- Ուսուցիչների առարկայական և մասնագիտական հմտությունների կատարելագործման ուղիների պարզաբանում,
- Բարձր մակարդակի, ստեղծագործ կադրերի պատրաստում և վերապատրաստում:

Մեր կարծիքով հետազոտական աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է.

- ուսուցիչը պետք է ուսումնասիրի տեսական գրականության տվյալները,
- ծանոթ լինի այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահոված լինի հետազոտական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերլուծի և ամփոփի ստացված արդյունքները:

Հետազոտական աշխատանքների արդյունքում, ուսուցիչը ծանոթանում է նորար տեխնոլոգիաների հետ, ծանոթանում է առկա գիտական զարգացումներին և դրանք կարող է կիրառել առարկայի դասավանդման ընթացքում և հասնել ավելի մեծ արդյունքների ապահովման:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Լինելով Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի կերպարվեստի ուսուցչուհի, կարևորում եմ ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացումը՝ հետազոտական աշխատանքների, ինչպես նաև ինքնակրթության մեթոդի կիրառմամբ։ Ներկայիս փոփոխվող տեղեկատվական դարաշրջանում հնարավոր չէ իրականացնել արդյունավետ, համալիր և որակյալ կրթական գործընթացներ առանց ուսուցչի կողմից հավելյալ տեղեկատվության, մեթոդների ու տեխնոլոգիաների ուսումնասիրման։ Հետազոտության իրականացման համար մշակել եմ հարցաթերթիկ, որի նպատակն էր գործընկերների կարծիքների ուսումնասիրությունը հետազոտական և ստեղծագործական աշխատանքների իրականացման վերաբերյալ։ Հետազոտությանը մասնակցել են աշխարհագրության, մաթեմատիկայի, հայոց լեզու և գրականության, պատմության, ինչպես նաև տարրական դասարանի ուսուցիչները։ Հարցաթերթիկում ներառել եմ հետևյալ հարցերը. (Հավելված 1)

1. Արդյո՞ք ստեղծագործական աշխատանք կատարելը դրական ազդեցություն է թողել Ձեր մասնագիտական կարողությունների վրա։
2. Ի՞նչ առարկայական նոր հմտություններ եք ձեռք բերել հետազոտական և ստեղծագործական աշխատանքների իրականացման ընթացքում։
3. Արդյո՞ք ձեռք բերված մասնագիտական հմտությունները կիրառելի են ուսումնական գործընթացում։
4. Արդյո՞ք հետազոտական աշխատանքի արդյունքները արդարացրել են Ձեր սպասելիքները։

Իրականացված հարցման արդյունքերն ամփոփելով, պետք է նշեմ, որ ուսուցիչների կարծիքով հետազոտական և ստեղծագործական աշխատանքները բարձրացնում և կատարելագործում են ուսուցիչների ինչպես առարկայական, այնպես էլ մասնագիտական հմտությունները, քանի որ իրականացված աշխատանքների շնորհիվ մանրամասն ոսումնասիրություն է կատարվում միջառարկայական, միջմշակութային բնագավառներում, ուսումնասիրվում են տեսությունները, դասավանդման և ուսումնառության մեթոդները, դասվանդման ընթացքում աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորումները,

ուսուցիչների փորձի փոխանակումը և այլն: Այդ պատճառով մանկավարժական հետազոտությունը թույլ է տալիս մեզ կառուցել կրթության տեսություն, որը բացատրում է կրթական փաստերը: Մանկավարժական հետազոտությունը համարվում է արժեքավոր ուսուցման գործիք, որն ուժեղացնում է ուսումնական գործընթացը, ինչպես նաև այն խթանում է քննադատական մտածողությունը, ստեղծագործական միտքը և դրա միջոցով ուսուցումն ակտիվանում է, այն նույնիսկ նպաստում է նորարարությունների հանդեպ հետաքրքրասիրություն և նախաձեռնություն ձևավորել:

Կերպարվեստ առարկայի շրջանակում, ուսումնասիրել եմ մի շարք մասնագիտական գրականություն, համացանցից պարբերաբար օգտվելով դուրս եմ բերում մասնագիտական կարևոր տեղեկատվություն, մշակում համապատասխան մեթոդական նյութեր առարկայի շրջանակներում իրառելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթական բարեփոխումների արդի փուլում հատուկ կարևորություն է ստանում ուսուցչի մասնագիտական պատրաստության, նրա գործունեության կատարելագործման վերաբերյալ նորովի մոտեցումների և արդյունավետ տեխնոլոգիաների առաջադրումը, ինչպով պայմանավորված է կրթության որակի բարձրացումն ու դպրոցներում իրականացվող նորարարությունների արդյունավետությունը: Տեսական ու փորձարարական հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակը, նրա գործունեության կատարելագործման արդյունավտությունը ապահովվում են ինչպես մասնագիտական պատրաստվածության, այնպես էլ մանկավարժական գործունեության ընթացքում մտածողության և մանկավարժական էթիկայի ձևավորման միջոցով, մանկավարժական գիտելիքների, մանկավարժական առաջավոր փորձի յուրացման, մասնագիտական կոմպետենցիաների զարգացման ճանապարհով մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում:

Շատ կարևոր է, որ ուսուցիչն ինքը գիտակցի սեփական մասնագիտական կարողությունները բարելավելու անհրաժեշտությունը: Սա ենթադրում է մանկավարժական աճի համար մոտիվացնելու և բարենպաստ պայմաններ ստեղծելու անհրաժեշտություն: Պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնցում ուսուցիչը ինքնուրույն գիտակցում է սեփական մասնագիտական որակների մակարդակը բարելավելու անհրաժեշտությունը: Մասնագիտական կարողությունների զարգացումը մասնագիտական փորձի յուրացման և արդիականացման դինամիկ գործընթաց է, որը հանգեցնում է անհատական մասնագիտական որակների զարգացմանը, մասնագիտական փորձի կուտակմանը, որը ներառում է շարունակական զարգացում և ինքնակատարելագործում:

Ուսուցչի ողջ մանկավարժական գործունեությունը նպատակաուղղված է աշակերտի անձի ձևավորմանն ու զարգացմանը: Դա է պատճառը, որ ուսուցիչը պետք է ամենասովորական առօրյայում անգամ իր ուշադրությունը կենտրոնացնի սովորողների անհատականությունը ձևավորելու վրա՝ նկատի ունենալով աշակերտի այդ որակն իբրև մարդկային կարևոր հատկանիշ, իբրև անհատի ձևավորման ու զարգացման փուլ ու մակարդակ, իբրև մարդու կենսակերպի առանձնահատուկ ձև, նրա ինքնատիպության, յուրօրինակության, անկրկնելիության գրավական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Օհանովա Ի. և ուրիշներ, «Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին», Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004թ.
2. Дзюбенко С. В. Роль и функции исследовательской деятельности в педагогической инновационной практике учителя / С. В. Дзюбенко // Качество. Инновации. Образование, 2014, № 3, С. 49-54.
3. Коджаспирова Г.М. Культура профессионального самообразования педагога. Пособие / Г.М. Коджаспирова. М.: Издательский центр «Академия», 1994. 334 с.
4. Лавренов А.Ю. Интернет для учителя. Пособие для системы доп. проф. образования / А.Ю. Лавренов [и др.]. М.: Федерация Интернет Образования, 2005. 93 с.
5. Суходимцева А. П. Обновление методов обучения в аспекте методологии учебной деятельности / А. П. Суходимцева // Преподавание истории и обществознания в школе, 2017, № 6, С. 39-43.

Հավելված 1.

Հարց 1. Արդյո՞ք ստեղծագործական աշխատանք կատարելը դրական ազդեցություն է թողել Ձեր մասնագիտական կարողությունների վրա

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Մասամբ

Հարց 2. Ի՞նչ առարկայական նոր հմտություններ եք ձեռք բերել հետազոտական և ստեղծագործական աշխատանքների իրականացման ընթացքում

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Մասամբ

Հարց 3. Արդյո՞ք ձեռք բերված մասնագիտական հմտությունները կիրառելի են ուսումնական գործընթացում

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Մասամբ

Հարց 4. Արդյո՞ք հետազոտական աշխատանքի արդյունքները արդարացրել են Ձեր սպասելիքները

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Մասամբ

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար: